

---

---

**ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՍԱՅՔՍ-  
ՊԻԿՈՅԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ**

ՄԱՐՈՒՔՅԱՆ Ա. Ց.

Թուրքիայի դեմ մղվող բոլոր պատերազմների ժամանակ Ռուսաստանի համար մշտապես ծագել է այդ երկրի բաժանման հարցը, սակայն բոլոր դեպքերում էլ այդ գործին միջամտել են Ֆրանսիան և Անգլիան, որի ընթացքում նրանց միջև ի հայտ են եկել խոր հակասություններ: Թուրքիայի բաժանման նախագծի կազմման ժամանակ իրենց զգացնել էին տալիս Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի շահերի բխումները՝ ազդեցության ոլորտների հետ կապված: Այս հարցն օրակարգի մեջ մտավ նաև Առաջին աշխարհամարտի ժամանակ և անգամ կազմվել էր համաձայնագրի նախագիծ, որը հավանության արժանացավ երեք երկրների կառավարությունների կողմից: Դրան հետագայում միացավ նաև Իտալիան: Բնական է, որ Թուրքիայի բաժանման ծրագրերը կամա թե ակամա առնչվում էին նաև Արևմտյան Հայաստանի տարածքների հետ, որոնք նույնպես դառնում էին բաժանման առարկա: Թուրքիայի բաժանման ծրագիրն Առաջին աշխարհամարտի տարիներին հայտնի է համաձայնագիրը կազմողների անունով՝ Մայքս-Պիկոյի համաձայնագիր, որոնք 1916 թ. սկզբին մշակեցին և ներկայացրին բաժանման նախագիծը:

Սակայն պետք է նշել, որ Թուրքիայի բաժանել-չբաժանելու հարցն Անտանտի պետությունների մեջ առաջացել էր դեռևս 1915 թ. վերջին: Ռուսաստանը պահանջում էր, որ դաշնակիցները ճանաչեն իր իրավունքները նեղուցների և Կ. Պոլսի նկատմամբ: 1915 թ. մարտի 1-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովն Անգլիայի և Ֆրանսիայի դեսպաններին հայտարարեց, որ Անգլիան և Ֆրանսիան պետք է բարձրաձայն հայտարարեն, որ իրենք համաձայն են պատերազմի ավարտից հետո Կ. Պոլիսը միացնել Ռուսաստանին: Նույնն ասաց նաև Նիկոլայ II-ը 1915 թ. մարտի 3-ին<sup>1</sup>: «Պատերազմի ավարտից հետո» ձևակերպումն առաջացել է Ռուսաստանի անընդհատ պահանջներից հետո: Դաշնակիցները գիտակցում էին, որ Ռուսաստանին այս հարցում մերժելու դեպքում կկորցնեն մի դաշնակցի, որն իր մարդկային ռեսուրսներով ծառայում էր որպես «թնդանոթի միս»: Սակայն, մյուս կողմից, նրանք վախենում էին Ռուսաստանի պատերազմից դուրս գալուց, երբ վերջինս կկարողանար զենքի ուժով լուծել իր հարցերը: Ուստի և, առաջ եկավ «պատերազմի ավարտից հետո» նեղուցները և Կ.Պոլիսը Ռուսաստանին հանձնելու ձևակերպումը, և այն սկզբնական շրջանում, թվում է՝ բավարարեց բոլոր կողմերին:

Թուրքիայի և, մասնավորապես, Արևմտյան Հայաստանի բաժանման հիմնահարցը դաշնակիցները հղացան 1915 թ. վերջին – 1916 թ. սկզբին, երբ

---

<sup>1</sup> *Հարությունյան Ա. Հ.*, Շահերի ներհակություններն ու զուգադիպումները Անտանտի ներսում 1917-1918թթ. (Բանբեր Հայաստանի արխիվների 1964, N 1, էջ 135):

Կովկասյան ճակատում գրանցվեցին ռուսական զենքի նոր հաջողություններ՝ կապված 1916 թ. սկզբին Էրզրումի գրավման հետ: Այս ամենը խթանեց նշված հարցի շուրջ բանակցությունների ակտիվացումն Անգլիայի և Ֆրանսիայի միջև՝ ասիական Թուրքիայի տարածքների բաժանման շուրջ: Անգլիան և Ֆրանսիան, արտաքուստ ողջունելով ռուսական բանակի հաղթանակը, իրականում թշնամաբար էին տրամադրված նրա դեմ, քանի որ տիրանալով ասիական Թուրքիային և դուրս գալով արաբական աշխարհ ու ծովային նոր ուղիներ՝ Ռուսաստանը շոշափում էր նրանց մեծապետական շահերը<sup>2</sup>: Առանց Էրզրումի հաղթանակի, դաշնակիցները հազիվ թե մերձավորարևելյան հարցերի քննարկման ժամանակ այդքան լուրջ հաշվի նստեին Ռուսաստանի հետ: Իրենց դիրքերն ամրապնդելու համար դաշնակիցները մի շարք միջոցների դիմեցին Եգիպտոսում, Իրաքում, Մուսուլում և Հարավային Պարսկաստանում: Էրզրումի և նրան հաջորդող մյուս ճակատամարտերի հետևանքով համարյա ամբողջ Արևմտյան Հայաստանը պատմության մեջ առաջին անգամ ընկավ ռուսական տիրապետության տակ<sup>3</sup>: Այս քայլերով Ռուսաստանը փաստորեն արագացրեց Թուրքիայի բաժանման գործընթացը և, անկախ իր կամքից, արդեն ստիպված էր բանակցել այս հարցի շուրջ: Անգլիայի և Ֆրանսիայի միջև համաձայնություն ձեռք բերվեց, և 1916 թ. մարտի 6-ին դրա արդյունքները հայտնվեցին ցարական կառավարությանը<sup>4</sup>: Փաստորեն, Անգլիան և Ֆրանսիան կրկին հանդես եկան միասին, և Ռուսաստանին փաստի առաջ կանգնեցրին, քանի որ վերջինիս համար շատ դժվար էր դուրս գալ միանգամից երկու դաշնակից տերությունների դեմ և այն էլ նրանցից տնտեսապես կախված լինելու պայմաններում: Այնուամենայնիվ, Ռուսաստանը դժգոհեց, որ անգլո-ֆրանսիական նախագծում Անգլիային և Ֆրանսիային անցնում էին հսկայական տարածքներ, իսկ ռուսական շահերը գրեթե անտեսված էին: «Հայաստան» կամ «Հայկական հարց» հասկացություններն ընդհանրապես չկային փաստաթղթում: Անգլիայի կառավարության լիազոր Մարկ Սայքսը Պետրոգրադում Անգլիայի դեսպան Ջ. Բյուքենենին 1916 թ. մարտի 12-ին հղած գրության մեջ հայտնում էր, որ հայկական պետության ստեղծումը, ինչպես նաև նրա ամբողջական միացումը Ռուսաստանին անհնար է: Այս գաղափարը Մ. Սայքսը հիմնավորում էր նրանով, որ Հայաստանում կան բազմաթիվ հեղափոխական կազմակերպություններ, և իբր թե, ինքն այս իմաստով օմտահոգվում էր Ռուսաստանի «խաղաղ» կառավարումով<sup>5</sup>: Իհարկե, սա ընդամենը պատրվակ էր, որպեսզի մերժվի Արևմտյան Հայաստանի ամբողջական անցումը Ռուսաստանին: Ակնհայտ էր, որ Մ. Սայքսը առաջին հերթին նկատի ուներ ֆրանսիական շահերը: Ի սկզբանե Ֆրանսիայի հետ Ռուսաստանի պայմանավորվածությունը այնպիսին էր, որ նեղուցների և Կ. Պոլսի դիմաց Ռուսաստանը պետք է ճանաչեր Միրիայի և Կիլիկիայի անցումը Ֆրանսիային<sup>6</sup>: Ռուսաստանն այս պայմանին

<sup>2</sup> Григорян В., Армения и Турция. Как быть дальше?, Е., 1998, с. 30.

<sup>3</sup> Հարությունյան Ա.Հ., նշվ. աշխ., էջ 144:

<sup>4</sup> Киракосян Дж., Западная Армения в годы Первой мировой войны, Е., 1971, с. 392.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 399:

<sup>6</sup> Тунян В. Г., Россия и Армянский вопрос, Е., 1998, с. 226.

համաձայնվել էր: Սակայն, ըստ անգլո-ֆրանսիական անջատ բանակցությունների, բացի Կիլիկիայից, ֆրանսիական տիրապետման գոտու մեջ էր ներառվել նաև Արևմտյան Հայաստանի զգալի մասը և հենց այն շրջանները, որոնք վաղուց գտնվում էին Ռուսաստանի շահագրգռվածության կենտրոնում<sup>7</sup>: Անգլո-ֆրանսիական պայմանավորվածությունները չէին կարող երկար գաղտնի պահվել, քանի որ ռուսական բանակը սրընթաց շարժվում էր առաջ և սպառնում էր գրավել ոչ միայն այդ համաձայնագրով Ֆրանսիայի համար նախատեսված Արևմտյան Հայաստանի տարածքները, այլև անմիջականորեն դուրս գալ դեպի Կիլիկիայի մատույցները, դեպի Սիրիա և Իրաք: Ուստի, դաշնակիցները ստիպված էին այս համաձայնության մասին տեղյակ պահել Պետրոգրադին: Անգլիան և Ֆրանսիան այս հարցը կարգավորելու համար Պետրոգրադ ուղարկեցին Մ. Սայքսին, որն անգլիական կառավարության խորհրդատուն էր մերձավորարևելյան հարցերով և Ժ. Պիկոյին, որը Ֆրանսիայի նախկին գլխավոր հյուպատոսն էր Բեյրութում: Մ. Սագոնովը սկզբում կարծում էր, որ կարիք չկար այդ դիվանագետներին Պետրոգրադ ուղարկել, քանզի որ մտածում էր, թե հարցը վերաբերում է դեռևս 1915 թ. մարտին տեղի ունեցած պայմանավորվածությանը՝ արաբական տարածքների՝ Անգլիային անցնելու և Կիլիկիայի՝ Ֆրանսիային անցնելու հետ կապված, ինչին Ռուսաստանը համաձայնել էր: Սակայն այդ դիվանագետները 1916 թ. մարտի 9-ին Պետրոգրադում Մ. Սագոնովի առջև դրեցին Թուրքիայի ասիական տարածքների նոր բաժանման քարտեզը: Ռուս նախարարի համար տիպիկ նորություն էր այն, որ ֆրանսիական գոտու մեջ ներառված էին Արևմտյան Հայաստանի գրեթե կեսը, ամբողջ Քրդստանը և, հակառակ Մ. Սագոնովի պնդման, ռուսական և ֆրանսիական գոտիների միջև չկար որևէ «բուֆերային կազմավորում», «անկախ թուրքական պետություն»: Այդ գոտիներն ունեին ընդհանուր սահման<sup>8</sup>: Դժգոհություն էր հարուցում նաև սահմանի անցման գիծը, որն սկսվում էր Ուրմիա լճի հյուսիսային ափից և Հայկական (Արևելյան) ու Կենտրոնական Տավրոսի լեռնազանգվածով իջնում էր դեպի Միջերկրական ծով, դեպի Անամուր<sup>9</sup>: Ակնհայտ էր, որ ռուսական շահերն այս քարտեզի վրա ոչ միայն հաշվի չէին առնվել, այլև ընդհանրապես անտեսվել էին: Ընդ որում, Պիկոն համառորեն ապացուցում էր, որ իր առաջարկությունները բխում են «բնական սահմանի» պահանջներից, ինչպես նաև այդ տարածքները ֆրանսիական գոտու մեջ մտնելու անհրաժեշտությունից, քանի որ դրանցում ֆրանսիական ազդեցության համար արդեն իսկ ամուր հիմքեր են դրել կաթոլիկական կազմակերպությունները<sup>10</sup>: «Բնական սահման» ասելով, Պիկոն նկատի ուներ Տավրոսի լեռնազանգվածը, իսկ կաթոլիկական կազմակերպություններն այն օղակներն էին, որոնցով Ֆրանսիան այդ տարածքներում ոչ միայն կազմակերպում էր հայերի դավանափոխությունը, այլև եռանդուն լրտեսական աշխատանք և քարոզչություն էր ծավալում հատկապես

<sup>7</sup> **Акопян С. М.**, *Западная Армения в планах империалистических держав, Е., 1967, с. 211.*

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 212:

<sup>9</sup> **Тунян В. Г.**, նշվ. աշխ., էջ 226:

<sup>10</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքական փաստաթղթերում (1828-1923), Ե., 1972, էջ 389:

Ռուսաստանի դեմ: Ս. Սազոնովի զայրույթն էր առաջացնում նաև այն, որ ներկայացված առաջարկների համաձայն, ֆրանսիական գոտին սեպի նման խրվում էր Ռուսաստանի՝ դեպի հարավ տանող ճանապարհի մեջ, ընդհուպ մինչև Պարսկաստանի սահմանը՝ Ուրմիա լիճը: Ս. Սազոնովը քարտեզին ծանոթանալուց հետո չթաքցրեց իր դժգոհությունը, սակայն հաջորդ օրը՝ մարտի 10-ին, նրան այցելեց Պետերբուրգում Ֆրանսիայի դեսպան Մ. Պալեոլոգը և հայտնեց, որ Պիկոյի և Սայքսի ներկայացրած քարտեզը ոչ թե նախագիծ է, այլ Անգլիայի և Ֆրանսիայի միջև ձեռք բերված համաձայնություն, ուստի լավ կլինի, եթե ռուսական կառավարությունը պարզապես հավանություն տա դրան<sup>11</sup>: Սա փաստացի վերջնագիր էր, սակայն Ս. Սազոնովը մտադիր չէր զիջել: Նա ձեռնարկեց մի շարք դիվանագիտական քայլեր՝ փորձելով ներկայացված քարտեզի շրջանակներում կատարել այնպիսի ձևափոխումներ, որոնք ռուսական կորուստները գոնե կհասցնեին նվազագույնի: Դրանք կապ ունեին դաշնակիցների շահերի և Փոքր Ասիայում տեղի ունեցող իրադարձությունների հետ<sup>12</sup>: Ս. Սազոնովը քաջ գիտակցում էր, որ փորձ է կատարվում Ռուսաստանի գոտին սահմանափակել այն տարածքներով, որոնք արդեն գրավված են ռուսական զորքերի կողմից, կամ որոնց գրավումը մոտ ապագայում կասկածից վեր էր: Այսպիսով, դաշնակիցները նախօրոք սահմանափակում էին ռուսների առաջխաղացումը դեպի արևմուտք և հարավ-արևմուտք, մասնավորապես դեպի Միջերկրական ծով ու Պարսից ծոց: Այս պայմաններում Ս. Սազոնովը պետք է շատ հաշվենկատ գործեր, որպեսզի Ռուսաստանը նաև չզրկվեր այն նյութատեխնիկական օգնությունից, որը տրամադրում էին դաշնակիցները և որը իրական ազդեցության լծակ էր Ռուսաստանի վրա: Ս. Սազոնովը մարտի 11-ին, այսինքն՝ վերջնագիրը ներկայացնելու հաջորդ օրը, զեկուցագրով դիմեց Նիկոլայ II-ին և հակիրճ ներկայացրեց անգլո-ֆրանսիական ծրագիրը՝ վերջում տալով համապատասխան մեկնաբանություններ:

Ստեղծված իրավիճակում Ս. Սազոնովը նպատակահարմար էր գտնում Ֆրանսիայի հետ կատարել տարածքային փոխանակություն, ինչն իր կարծիքով, Ռուսաստանի համար կլիներ «չարյաց փոքրագույնը»: Նա համոզված էր, որ ուժերի հարաբերակցությունը թույլ չի տալիս Ֆրանսիայից ուղղակիորեն պահանջել որևէ տարածքի միացում Ռուսաստանին: Ռուսաստանն իր քաղաքական ազահության պատճառով վաղուց բաց էր թողել Թուրքիայի բաժանման նախագիծ կազմելու նախաձեռնությունը, և այժմ դաշնակիցներն էին այս հարցում տոն տվողը: Զեկուցագրում նախարարն առաջարկում էր, որ եթե Ռուսաստանին հաջողվի պաշտպանել վերոնշյալ տեսակետը՝ կապված բուֆերների հետ, ապա պետք է պնդել ռուսական գոտու մեջ Ուրմիայի շրջանի և Բիթլիսի անցուղիների ներառումը՝ Ֆրանսիային որոշ փոխհատուցում անելով Փոքր Հայքում՝ Սվազ-Խարբերդ-Կեսարիա եռանկյան շրջանում<sup>13</sup>: Ս. Սազոնովը կարծում էր, որ Ռուսաստանի համար ավելի կարևոր է Ուրմիայի շրջանին և Բիթլիսի անցուղիներին տիրանալը, քան Սեբաստիա-Խարբերդ-Կեսարիա

<sup>11</sup> Киракосян Дж., նշվ.աշխ., էջ 393:

<sup>12</sup> Акопян С. М., նշվ.աշխ., էջ 215:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 215:

հայաբնակ եռանկյունին ունենալը: Քրդերով բնակեցված Հաքյարիի շրջանի հետ Սեբաստիա-Կեսարիա-Խարբերդ հայաբնակ եռանկյունու փոխանակման իմաստն այն էր, որ Ռուսաստանը հարավում փորձում էր սահման ունենալ ոչ թե ֆրանսիական գոտու հետ, որը սկզբնական տարբերակով պետք է անցներ Ուրմիա-Վան-Բիթլիս գծով, ինչն ավելի էր ֆրանսիական գոտին մոտեցնում բուն Ռուսական կայսրության սահմաններին, այլ այս ձևով փորձում էր ֆրանսիական գոտին հեռացնել իր անմիջական սահմաններից և հարավում գործ ունենալ արաբական պետության հետ՝ անգամ եթե այն լիներ ֆրանսիական ազդեցության ոլորտում: Նշված եռանկյունին զիջելու գաղափարը Ռուսաստանի համար ընդունելի էր այնքանով, որ Ռուսաստանը տիրապետում էր Սև ծովի հարավային առափնյա շրջաններին և, բացի այդ, Ռուսաստանին էին անցնելու Կ. Պոլիսը և նեղուցները: Ասվածից ելնելով՝ նշված տարածքը կենսական անհրաժեշտության տեսակետից հնարավոր էր համարվում փոխանակել, քանի որ այլ տարբերակ Ֆրանսիայի համար պարզապես ընդունելի չէր լինի: Զեկուցագրի բնագրի վրա Նիկոլայ II-ը նշեց, որ համաձայն է:

Այս նույն ժամանակ՝ 1916 թ. մարտի 13-ին, Պալետոզը հանդիպում է Նիկոլայ II-ի հետ և բարձրացնում է Հայաստանի ենթադրվող սահմանադրության հարցը: Ի պատասխան՝ ցարն ասում է. «Դա ամենաբարդ խնդիրներից մեկն է. ես այդ հարցը դեռևս չեմ քննարկել իմ նախարարների հետ»<sup>14</sup>: Իրականում Ֆրանսիայի դեսպանն այս հարցով ուզում էր իմանալ ցարի դիրքորոշումն Արևմտյան Հայաստանի բաժանման ծրագրի մասին, իսկ ցարը, հասկանալով հարցի ենթատեքստը, անորոշ պատասխան էր տալիս՝ փորձելով ժամանակ շահել, քանի որ դեռևս պատրաստ չէր ռուսական պատասխանը և իսկապես հրավիրվել էր հատուկ խորհրդակցություն՝ նշված հարցի շուրջ դիրքորոշում ձևակերպելու համար: 1916 թ. մարտի 17-ին բացվեց Ռուսաստանի հատուկ խորհրդակցության առաջին նիստը: Նիստի ժամանակ Ս. Սազոնովն ընդգծեց այն միտքը, որ եթե անհնարին է ստեղծել միասնական Հայաստան, ապա հենց իրենց՝ հայերի համար ավելի լավ է, որ նրանց այն մասը, որը մնում է Ռուսաստանից դուրս, պատկանի քաղաքակիրթ Ֆրանսիային և ոչ թե Թուրքիային, որը նրանց այնքան դժբախտություններ է պատճառել: Խորհրդակցությունը լիովին համաձայնվեց դրան<sup>15</sup>: Ս. Սազոնովը փորձում էր արդարացում գտնել ֆրանս-անգլիական միացյալ ճակատի դեմ Ռուսաստանի ակնհայտ դիվանագիտական պարտության համար և ինչպես ռուսներին, այնպես էլ հայերին առաջարկում էր հաշտվել ստեղծված վիճակի հետ, քանզի ոչինչ անել հնարավոր չէ, և ստեղծված իրավիճակը «չարյաց փոքրագույնն» է հայերի համար, որոնք թեկուզև կբաժանվեն երկու մասի, սակայն կգտնվեն երկու քաղաքակիրթ պետությունների տիրապետության տակ:

<sup>14</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքական փաստաթղթերում, էջ 392:

<sup>15</sup> *Раздел Азиатской Турции. По секретным документам б. Министерства иностранных дел, под редакцией Адамова Е. А., М., 1924, с. 174.*

Ս. Սազոնովը 1916 թ. մարտի 17-ին ներկայացրեց հուշագիր, որով ազդարարեց, թե իր կառավարությունը կհամաձայնվի Սայքս-Պիկոյի նախագծին, եթե Ռուսաստանին անցնեն Կ.Պոլիսը, նեղուցները, Բիթլիսի լեռնանցքները, Ուրմիայի օկրուգը, Արևմտյան Հայաստանի մի մասը, Հաքյարիի մարզը և Սև ծովի հարավային ափը, իսկ Պաղեստինում ապահովված լինեն ուղղափառ եկեղեցու իրավունքները: Ըստ Ս. Սազոնովի, մնացած տարածքների վերաբերյալ Անգլիան և Ֆրանսիան կարող էին համաձայնության գալ իրար հետ: Ընդ որում, ցարական կառավարությունը պատրաստ էր Ֆրանսիային զիջել Փոքր Հայքի այն տարածքը, որն ընկնում էր Սեբաստիայի, Խարբերդի և Կեսարիայի միջև<sup>16</sup>:

Այսպիսով, համաձայն 1916 թ. ապրիլի 13/26 համաձայնագրի, որը կատարվեց ռուսական կողմից՝ հայտագրի, իսկ ֆրանսիական կողմից հայտագրի փոխանակության ձևով, Ռուսաստանին էին անցնում իրեն սահմանակից Էրզրումի և Վանի վիլայեթները, Տրապիզոնի և Բիթլիսի վիլայեթների արևելյան մասերը և Դիարբեքիի, Խարբերդի ու Սեբաստիայի վիլայեթների չնչին մասերը: Ֆրանսիացիներին էին անցնում Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքիի վիլայեթների մեծագույն մասերը, Բիթլիսի վիլայեթի արևմտյան մասը, ինչպես նաև Կիլիկիան ու նրան հարակից շրջանները<sup>17</sup>:

1916 թ. ապրիլի 13/26-ին ռուս-ֆրանսիական համաձայնագրի ստորագրմանը հաջորդեցին անգլո-ֆրանսիական համաձայնագրերը (մայիսի 9-ին և 16-ին)<sup>18</sup>: Այս ամենից հետո, բնականաբար, պետք է տեղի ունենար նաև ռուս-անգլիական համաձայնագրի ստորագրումը, որից հետո շղթան կփակվեր, և խնդիրը կհամարվեր լուծված: 1916 թ. մայիսի 30-ին Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆը հեռագրով դիմում էր Ս. Սազոնովին, որտեղ ասում էր, որ Անգլիայի արտգործնախարար Է. Գրեյը մայիսի 23-ին իրեն հայտագիր է ուղարկել, ըստ որի, Անգլիան միանում է ռուս-ֆրանսիական համաձայնագրին: Գրեյի ուղարկած նոտայի վրա Նիկոլայ II-ն անձամբ մակագրել է. «Համաձայն եմ, բացի 1-ին հոդվածից: Եթե մեր բանակին հաջողվի հասնել մինչև Սինոպ, ապա այստեղով էլ պետք է անցնի մեր սահմանագիծը»<sup>19</sup>: Այսպիսով, Նիկոլայ II-ն էլ էր հասկացել, որ Գրեյը փորձում է անորոշություն մտցնել այս հարցում, ուստի ինքը փորձում է կոնկրետացնել սահմանը: Սակայն, ինչպես հայտնի է, ռուսական բանակը չկարողացավ հաջողության հասնել այդ ուղղությամբ, ուստի ավելի իրական և վերջնական տարբերակը մնաց Ս. Սազոնովի նշած Օրդուի սահմանագիծը:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ նախատեսվում էր ստեղծել հինգ գոտի: Դրանցից «կապույտն», ընդգրկում էր Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան՝ հարավ արևելյան Անատոլիայի (Այնթապ, Ուրֆա, Մարդին, Դիարբեքի և

<sup>16</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքական փաստաթղթերում, էջ 394:

<sup>17</sup> Киракосян Дж., նշվ. աշխ., էջ 394:

<sup>18</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքական փաստաթղթերում, էջ 396:

<sup>19</sup> Акопян С. М., նշվ. աշխ., էջ 219:

Հաքյարի) հետ, և անցնում էր Ֆրանսիային, «կարմիր» գոտին ներառում էր հարավային և կենտրոնական Իրաքը, Պաղեստինի Հայֆա ու Ակկա նավահանգիստները և անցնում էր Անգլիային: «Դարչնագույն» գոտում (Պաղեստինի մնացած մասը) Ռուսաստանի և մյուս երկրների համաձայնությամբ հաստատվում էր միջազգային կառավարում: Արևելյան Սիրիան ու Մոսուլը մտնում էին Ֆրանսիայի ազդեցության ոլորտի մեջ («A» գոտի), իսկ Անդրհորդանանն ու Բաղդադի վիլայեթի հյուսիսային մասը՝ Մեծ Բրիտանիայի ազդեցության տակ գտնվող («A») գոտու մեջ: Ռուսաստանին անցնող տարածքները՝ Արևմտյան Հայաստանը, Կ.Պոլիսը, նեղուցներն ու հարակից շրջանները պետք է կազմեին «դեղին» գոտին<sup>20</sup>: Սկզբնական շրջանում այս համաձայնագիրը գաղտնի էր պահվում: Դա բացատրվում էր երկու պատճառով. առաջին՝ պատերազմը դեռ չէր ավարտվել և իմաստ չուներ հրապարակելու այն համաձայնագրի պայմանները, որոնք իրականանալու էին միայն հաղթանակից հետո և երկրորդ՝ Անտանտի պետություններն իրենց հռչակել էին ազատարարներ և հրապարակայնորեն հայտարարում էին, որ պատերազմում են փոքր ժողովուրդների իրավունքների համար:

Այն, որ Ֆրանսիայի հետ Ռուսաստանի բանակցություններն ընթանում էին գաղտնի պայմաններում, հաստատում է ևս մի հետաքրքիր փաստ: 1916 թ. մայիսի 1-ին Փարիզում ռուսական դեսպան Իզվոլսկին հեռագիր է ուղարկում Ս. Սազոնովին, որտեղ նշում է, որ ինքը Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Կամբոնից է իմացել Պետրոգրադում Թուրքիայի բաժանման շուրջ բանակցությունների մասին, և որ բացի Կիլիկիայից, ֆրանսիական գոտու մեջ է մտցվել հայկական վիլայեթների մի մասը՝ Սեբաստիայով և Խարբերդով<sup>21</sup>:

Այս պայմանագիրը գաղտնի էր պահվում անգամ Անտանտի մնացած պետություններից: Իտալիայի հետախուզությունն իմացավ այդ մասին, և իտալական կառավարությունն առաջադրեց իր պահանջները: Սակայն դրանք հաշվի չառնվեցին այնքան ժամանակ, մինչև որ Իտալիան պատերազմ չհայտարարեց Գերմանիային: Փաստորեն, Սայքս-Պիկոյի համաձայնագրի ամբողջական իրագործման դեպքում օսմանյան լայնածավալ կայսրությունից գրեթե ոչինչ չէր մնալու: Նրա մեծագույն մասը, պատերազմը դեռ չավարտված, Իտալիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի միջև արդեն բաժանվել էր կամ տիրապետման գոտիների, կամ էլ ազդեցության ոլորտների ձևով: Հայ գործիչները կռահում էին, որ կոնկրետ Արևմտյան Հայաստանի հետ կապված ինչ-որ բանակցություններ են ընթանում: Դեռևս 1915 թ. ընթացող Թուրքիայի բաժանման նախնական բանակցություններից հայ գործիչները գիտեին, որ Ֆրանսիան հավակնություն է ցուցաբերում Կիլիկիայի հանդեպ: 1915 թ. նրանք միամտորեն

<sup>20</sup> Հայկական հարց, Ե., 1996, էջ 398:

<sup>21</sup> Акопян С. М., նշվ. աշխ., էջ 219:

փորձում էին Լոնդոնին, Փարիզին և Պետրոգրադին համոզել, որ Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի հովանավորության ներքո ստեղծվի ինքնավար Հայաստան՝ չընկալելով այն իրողությունը, որ այդ տերությունները ծրագրում էին իրար մեջ բաժանել Թուրքիան, այդ թվում և Արևմտյան Հայաստանը։ Այն, որ հայ գործիչները տեղյակ էին գաղտնի բանակցությունների մասին, պարզորոշ ապացուցում է հետևյալ փաստը։ Փարիզից 1916 թ. Պողոս Նուբար փաշան նամակ է գրում Մ. Պապաջանովին, որտեղ ասված է. «Ասիական Թուրքիայի նկատմամբ դաշնակիցների միջև կա մի համաձայնություն, որի մասին Դուք, անշուշտ, գիտեք, այն կարգավորում է դաշնակից պետություններից յուրաքանչյուրին բաժին ընկնող տարածքների խնդիրը։ Թեև մեզ հայտնի չեն այս բաժանման բոլոր պայմանները, բայց մենք գիտենք, որ վեց վիլայեթները և Կիլիկիան չեն կազմելու մի ամբողջական տարածք, և որ նրանց մի մասը տրվելու է Ռուսաստանին, իսկ մյուսը, որը սահմանափակվելու է Կիլիկիայով, տրվելու է Ֆրանսիային»<sup>22</sup>։ Այս փաստն ավելի քան խոսում է և մեկնաբանության կարիք չունի։

Ավելացնենք, որ Սայքս-Պիկոյի համաձայնագիրն իրականացավ միայն Անգլիայի և Ֆրանսիայի համար, իսկ Ռուսաստանը, որը դրանից հետո գտնվում էր հեղափոխական ցնցումների մեջ, դուրս մղվեց դրա շրջանակներից։ Սրա համար առիթ ծառայեց նաև այն, որ բոլշևիկները հրապարակեցին նաև Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրի պայմանները։ Այսպիսով, ինչպես միշտ, փոքր ժողովուրդների շահերը զոհաբերվում էին հանուն մեծ տերությունների քաղաքական ծրագրերի ու նպատակների։

## РАЗДЕЛ ЗАПАДНОЙ АРМЕНИИ И РОССИЯ ВО ВРЕМЯ ПЕРЕГОВОРОВ САЙКСА-ПИКО

МАРУКЯН А. Ц.

### Резюме

В самом разгаре Первой мировой войны великие державы уже вынашивали планы раздела Турции. Каждая держава в ходе переговоров, которые завершились соглашением Сайкса-Пико, очерчивала круг своих территориальных интересов. В отношении Западной Армении обострилась борьба между Францией и Россией. Переговорный процесс завершился тем, что Франции досталась Киликия и западная часть Западной Армении, а за Россией укрепилось право на Константинополь, проливы и на восточную часть Западной Армении. Однако вследствие революционных потрясений, которые охватили всю Россию в 1917 году, она лишилась тех территорий, которые предоставлялись ей по этому соглашению.

<sup>22</sup> Тунян В. Г., նշվ. աշխ., էջ 229։